4213

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀՈՌԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ թիվ- 01

413

Գ. Ծաղկահովիտ

10.01. 2021-թ.

Ծաղկահովիտի „Կոմունալ ծառայություն" համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը << ՀՈԱԿ>> ի դեմս տնօրեն Հ. Հովհաննիսյանի ղեկավարելով կազմակերպության կանոնադրությամբ և օրենսդրությամբ և ՀՀ ՏԿ ԱԻՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վահագն Օհանյանի, որը գործում է ընկերության կանոնադրությամբ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը իր ջրամատակարարման և համակարգին միացված ցանցի միջոցով աբոնենտին մատակարարում է խմելու որակի ջուր և իր ջրահեռացման համակարգով հեռացնում և մաքրում է կեղտաջրերը:

1.2 Աբոնենտը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերից օգտվելու կանոնների համաձայն օգտագործում է մատակարարված ջուրը, կեղտաջրերը լցնում ջրահեռացման համակարգ պայմանագրում նշված ժամկետում ու նախատեսված կարգով վճարում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սակագներով:

2 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 կողմերը պարտավորվում են դեկավարվել ՀՀ օրենսդրությամբ, կանոններով և սույն պայմանագրով:

2.2 Ընկերությունը պարտավորվում է՝

ա/ ապահովել աբոնենտի ամենօրյա ջրամատակարարումը /ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի/ 900 խ/մ 135000 /մեկ հարյուր երեսուն հինգ հարյուր/ ՀՀ դրամ մեկ տարին

բ/ Աբոնենտից իր տնօրինության տակ գտնվող ջրահեռացման համակարգ ընդունել կոմունալ-կենցաղային և արտադրական կեղտաջրերը 900 խ/մ 31500 /երեսուն մեկ հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ

գ/ պահպանել կողմերի տնօրինության տակ գտնվող ջրամատակարարման համակարգի սահմանազատման տեղում մատակարարվող ջրի որակը ըստ գործող ստանդարտների պահանջներին համաձայն կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը:

2.3 Աբոնենտը պարտավորվում է՝

ա/մատակարարված ջրի և կեղտաջրի հեռացման և մաքրման վարձը վճարել վճարային փաստաթղթը ստանալուց 10 օրվա ընթացքում:

բ/ ջրի չմատակարարման, կեղտաջրերի չհեռացման կամ դրանց ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև որակի նկատմամբ կասկածներ առաջանալու դեպքում անհապաղ տեղեկացնել ընկերությանը:

գ/ ապահովել իր տնօրինության տակ գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը ու սարքավորումների պահպանությունը և դրանց շահագործումը:

դ/ ջրի մատակարարումից և կեղտաջրերի հեռացումից հրաժարվելու դեպքում դրա մասին տեղյակ պահել ընկերությանը:

ե/ Չգերազանցել պայմանագրով սահմանված ջրաբանակը և ջրահեռացման համակարգ կեղտաջրերի քանակն ու թույլատրելի սահմանված նորմաները:

3. ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ջրաչափի բացակայության դեպքում մատակարարված ջրի շարժման 1,5 մ/վրկ արագության և ջրամատակարարման փաստացի տևողության պայմանից հաշված վերջին փոխադարձ հաշվարկների օրվանից մինչև հոսքման վերացումը

3.2 մատակարարված ջրի, կոյուղի բաց թողնված կեղտաջրերի քանակների հաշվարկման ժամանակահատվածն է համարվում հաշվարկային ամիսը յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը ընկերությունը և աբոնենտի պատասխանատու անձինք կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ ջրաչափի համար կողմերից մեկի չներկայանալու դեպքում կազմվում է միակողմանի ակտ և գրավոր ներկայացվում մյուսին:

-16.650

3.3 Աբոնենտից ջրահեռացման համակարգ լցվող կեղտաջրերի բանակը, ըստ կանոնների, հավասար է մատակարարված ջրի բանակին: Դրա չհամապատասխանելու դեպքում բանակը որոշվում է կանոնով սահմանված հաշվարկներով:

4.ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Աբոնենտին մատակարարված ջրի և կեղտաջրերի հեռացման ու մաքրման վարձի վճարումը կատարվում է պայմանագրում նշված սակագներով:

Վարձավճարը մուծվում է ՇԱՂԿԱՁՈՎԻՏԻ ՎՏԲ ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ Ծաղկահովիտի Մ/Ճ 2/Հ 16102007188200
Պայմանագրի կնքման պահից գործում են հետևյալ սակագները՝

Մեկ խորանարդ մետր մատակարարվող ջրի համար 150 դրամ

Մեկ խորանարդ մետր հեռացվող կեղտաջրի համար 35 դրամ

4.2 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխված սակագների կիրառումը պարտադիր է կողմերի համար:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի պարտավորությունները չկատարելու դեպքում, չկատարած կողմը պարտավոր է կողմին հատուցել պատճառած վնասը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Ջրի չմատակարարման, կեղտաջրերի չհեռացման կամ դրանց ոչ պատշաճ կատարման դեպքում բացառությամբ կանոնների 80-րդ և 81-րդ կետերում նշված դեպքերի , ընկերությունն աբոնենտին չմատակարարած ջրի և ջրահեռացված կեղտաջրերի փաստացի բանակների համար վճարում է տույժ սակագների կրկնապատիկի չափով:

5.3 Հաշվարկային ժամկետում պայմանագրով նախատեսված ջրաբանակը գերազանցելու , ինչպես ջրահեռացման , համակարգ ավելի բաց թողնված կեղտաջրերի համար աբոնենտը վճարում է տույժ գերազանցի և ավելի բաց թողնված կեղտաջրերի սակագնի տասնապատիկի չափով:

5.4 Աբոնենտի կողմից ընկերության ջրահեռացման համակարգ լցվող կեղտաջրերի կեղտոտվածության աստիճանը չպետք է գերազանցի ՀՀ բնապահպանության նախարարության սահմանված նորմերը:

5.5 Սույն պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծել բանակցությունների միջոցով, որը չի սահմանափակում կողմերի վեճերը դատական կարգով լուծելու իրավունքը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից և տարածվում է 2021թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

6.2 Պայմանագրի գործողության ժամկետը մատակարարվող ջրի և ջրհեռացման համակարգ լցվող կեղտաբանակների փոփոխման դեպքում պայմանագիրը ենթակա է փոփոխման:

6.3 Պայմանագրի փոփոխումը և լուծումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագրի գործողության ժամկետի ավարտը կամ դրա լուծումը կողմերի միջև մինչև այդ պայմանագրի խախտելու համար պատասխանատվությունից:

6.4 Պայմանգիրը կնքվում է անժամկետ և կարող է լուծարվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ

6.5 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, յուրաքանչյուր կողմի համար մեկական օրինակ:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	ԱԲՈՆԵՆՏ
ՇԱՂԿԱՁՈՎԻՏԻ „ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ" <<ՀՈԱԿ"	ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՎՀՀ 05019914	գլխավոր բարտուղար՝ Վ. ՕՀԱՆՅԱՆ
Հ/Հ 220425140120000	ՀՎՀՀ [illegible]
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Հ/Հ [illegible]